1230-1240-ԱԿԱՆ ԹԹ. ՄՈՆՂԱԼԱԿԱՆ «ՉԵՐԻԿ» ԶՈՐԱՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ 355.486

ԱՐԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի
կովկասագիտության բաժնի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
vebliber-civil@mail.ru

Հոդվածում ներկայացվում են հայ-վրացական փինուժի ներգրավվածության առանձնահատկությունները մոնղոլական «չերիկ» կոչվող զորամիավորումներում: Քոչվորական հասարակություններում նստակյաց ժողովուրդներից ռազմական օժանդակ ուժերի հավաքագրման գործընթացի ուսումնասիրումը բավական հետաքրքրում է հետազոտողներին, քանզի խորհրդային տարիներին տրված եզրահանգումները արդի ժամանակներում վերարժևորման կարիք են զգում: Նախ՝ գործընթացի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պարզելու ոչ միայն քոչվորների ռազմական պատմության առանձնահատկությունները, այլև քաղաքական գործընթացների ուղղությունը և քաղաքական ավանդույթների կերպափոխումը: Հեղինակի դիտարկմամբ՝ վերոհիշյալ իրողություններն իրենց տրամաբանական կարգացումն են ստացել նաև կովկասյան տարածաշրջանում, որտեղ մոնղոլները, ինչպես Չինաստանում ու Իրանում, քաղաքական երկխոսության մեջ էին մտնում տեղի ավատատիրական ավագանու ներկայացուցիչների հետ: Աղբյուրագիտական վերլուծության են ենթարկվում ինչպես հայկական ու վրացական, այնպես էլ պարսկական ու արաբական աղբյուրների հաղորդած տեղեկությունները՝ խնդիր դնելով մոնղոլների հետախուզական ու գլխավոր արշավանքների ընթացքում հայ ու վրաց իշխանների և մոնղոլ զորահրամանատարների միջև քաղաքական երկխոսության բացահայտումը: Հոդվածում հանգում ենք այն գաղափարին, որ «չերիկը» և նրանում ընդգրկված հրամանատարներն իրենց ուրույն դերակատարումն են ունեցել մոնղոլների հաղթանակների գործում:

Բանալի բառեր՝ *չերիկ, խաշար, քաղաքական երկխոսություն, նոյոն, Քյոսե-Դաղի ճակատամարտ, «վեկամուտ» զորք, Դավիթ Ուլու, հայ-վրացական փինուժ:*

Նվաճումների սկզբնական շրջանում մոնղոլները հաճախ էին քաղաքական երկխոսության մեջ մտնում տեղի ավատատիրական ավագանու հետ, և վերջիններս ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում մոնղոլների նվաճումների ողջ ընթացքում: Համաձայնության այդ տարբերակը ընդունելի էր երկու կողմերի համար էլ: Նախ՝ մոնղոլները հնարավորություն էին ստանում դյուրին կերպով նվաճել այս կամ այն երկիրը՝ ունենալով լրացուցիչ օգնական ուժեր և ապա՝ այդ ճանապարհով կանխում էին հակառակորդների հնարավոր համախմբումը: Տեղի ավատատերերն էլ, իրենց հերթին հնազանդություն հայտնելով մոնղոլներին, ըստ երևույթին, պահպանում էին իրենց տիրապետության տակ գտնվող տարածքների կառավարումը և ստանում էին

* Հոդվածը ներկայացվել է 01.05.2019թ., գրախոսվել՝ 23.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

ներքին ինքնուրույնություն՝ մասնակցելով մոնղոլական նվաճումներին և վճարելով որոշակի հարկ: Համանման զորամիավորումներ 1235-1236թթ. ձևավորվեցին նաև Չինաստանում և հայտնի էին «Սև Բանակ» ընդհանուր անունով:[958] Այդ քաղաքականությունը լայնորեն կիրառվում էր միջինասիական քաղաքների նվաճման ժամանակ: Բալխի շրջանի նվաճման ժամանակ (1220 թ.) մոնղոլներն օգտագործում էին տեղի ավատատերերից Ալա ադ-Դինի ռազմական ուժերը[959]:

1. «Չերիկ» զորամիավորումները և հայերի ներգրավվածությունը: Տեղական ավատատիրական ուժերի օգտագործումը և մոնղոլական բանակներում ընդգրկման գործընթացը մեծ թափ ստացավ Օգեդեյ խանի կառավարման տարիներին (1229-1241 թթ.), երբ կայսրությունը սկսեց արագորեն ծավալվել բոլոր ուղղություններով[960]: Այդ «օգնական» ուժերը պարսկական աղբյուրները հիշատակում են «չերիկ» անունով և հիմնականում գործածում էին նստակյաց շրջաններից հավաքագրվող զորքը մոնղոլ-թյուրքական զորքերից տարբերելու համար[961]: Կովկասյան տարածաշրջանում չերիկի կիրառման դեպքերը հայտնի են դեռևս հետախուզական արշավանքի ժամանակ: 1221թ. հունվարի երկրորդ կեսին, երբ մոնղոլները ներխուժում են վրացական պետության սահմանները, Ելտկուզյան աթաբեկ Ուզբեկի թյուրք մամլուք և Աղվանքում նրա տեղապահ Ակուշին ներառում են չերիկում: Ակուշի զորքն ընթանում էր մոնղոլների առջևից, և նրանք, հանկարծակիության գործոնն օգտագործելով, ասպատակելով հասնում են Տփղիսի մատույցները: Հավատարիմ իրենց մարտավարությանը՝ մոնղոլները առաջնագծում օգտագործում էին չերիկի զորամիավորը: Իբն ալ-Ասիրի խոսքերով՝ «*Սկզբում Ակուշը ընդհարվեց նրանց հետ այն մարդկանցով, որոնք հավաքվել էին իր շուրջը*»[962]: Մոնղոլները չերիկի համալրման ու կիրառման քաղաքականությունը արդյունավետ օգտագործեցին 1236թ. ձեռնարկած արշավանքի ընթացքում: Մոնղոլական զորքերի հրամանատար Չարմաղանը, առանձին ջոկատների բաժանելով մոնղոլական 30 000-անոց բանակը, կարճ ժամանակամիջոցում գրավեց ամբողջ Անդրկովկասը: Այդ գործում դերակատարում ունեցան նաև տեղի ավատատերերը: Իվանե աթաբեկի որդին՝ Ավագ ամիրսպասալարը, երկար ժամանակ դիմադրություն ցույց տալով Կայեն բերդում, ի վերջո հնազանդվեց մոնղոլներին: Կիրակոս Գանձակեցու խոսքերով՝ Չարմաղանը, ի նշան բարեկամության, «*կամենայն աշխարհ նորա ետ նմա, և այլ ևս ավելի, և անքակ սէր հաստատեաց ընդ նմա*»[963]: Փոխարենը Ավագը պարտավորվեց մասնակցել մոնղոլների հետագա նվաճումներին, ինչը ևս փաստում է Կիրակոս Գանձակեցին՝ նշելով . «*Եւ առեալ վնա և ամենայն զօրն՝ չոգաւ ի վերայ քաղաքին Անւոյ*»[964]: Պատկերը կրկնվում է նաև Խաչենի տիրակալ Հասան Ջալալի դեպքում: Չկարողանալով գրավել Խոխանաբերդ ամրոցը, որտեղ ամրացել էր իշխանը, մոնղոլները բանակցություններ են սկսում վերջինիս հետ: Մոնղոլները «*մեծարանս արարեալ նմա, տան կաշխարհին իւր ի ձեռս նորա՝ այլ ևս յաւելուածով, և հրամայեն նմա ամի ամի երթալ զկնի նոցա ի գործ*

---

[958] **Allsen T.**, *Mongol Imperialism, the Policies of the Grand Qan Mongke in China, Russia, and the Islamic Lands, 1251-1259, University of California Press, 1987pp. 195-202.*

[959] **Jackson P.**, *The Mongols and the Islamic World, From Conquest to Conversion, Yale University Press, 2017, p. 152.*

[960] **Allsen T.** *op. cit., p. 192.*

[961] **Juvaini**, *Genghis Khan, History of the World-Conqueror, Boyle J. (ed.), Manchester University Press, 1958, pp. 97. 165.*

[962] **Իբն ալ-Ասիր**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 11, Արաբական աղբյուրներ, թարգմանությունը բագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան 1981, էջ 300-301:

[963] **Գանձակեցի Կ.**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 257:

[964] Նույն տեղում:

պատերազմի և միամտութեամբ կալ ի հնազանդութեան նոցա»[965]: Այունյաց իշխան Ելիկում Օրբելյանը, հնազանդվելով մոնղոլներին, պահպանեց իր տիրույթները և պարտավորվեց մասնակցել մոնղոլների արշավանքերին: Պատմիչ Ստ. Օրբելյանի խոսքերով՝ Ասլան նոյոնը «*կալեալ զնա առաջնորդ գնաց մինչև յԱնի, եւ հնազանդեր զամենայնն*»[966]: Պատմիչի հավաստիացմամբ՝ Ելիկում իշխանը Ավագի, Շահնշահի և վրաց իշխանների հետ մասնակցել է նաև Մարտիրոսաց կամ Նփրկերտ քաղաքի գրավմանը[967]: Վրաց ժամանակագրության համաձայն՝ նման քայլի գնացին նաև Զաքարե ամիրսպասալարի որդին՝ Շահնշահն ու Վահրամ Գագեցին[968] :

2. «Խաշար» զինվորական ստորաբաժանումները: Չերիկի զորամիավորումների հետ զուգահեռ՝ մոնղոլները կիրառում էին նաև *խաշարի*[969] ստորաբաժանումները: *Խաշարը* նվաճված տարածքներից համալրելու մասին տեղեկություններ պահպանել են պարսկական ու արաբական աղբյուրները: Մասնավորապես Ջուվեյնին նշում է միջինասիական քաղաք Մերվի ավերման (1220թ.) մասին՝ ասելով, որ գրավմանը մասնակցում էին 7000 մոնղոլ և 10 000 աշխարհազորային[970]: Ասորի մատենագիր Բար-Հեբրեոսի տեղեկություններով՝ Բուխարայի գրավման ժամանակ (1220թ.) ևս օգտագործվել են գերիներից բաղկացած ստորաբաժանումներ[971]: Ռաշիդ ադ-Դինը պահպանել է տեղեկություններ *խաշարի* կիրառման վերաբերյալ Մարաղայի գրավման ժամանակ (1221թ.)[972]: Մեկ այլ տեղ Ռաշիդ ադ-Դինը նկարագրում է միջինասիական Խոջենդ ու Օթրար քաղաքների նվաճումը (1220թ.), որի ժամանակ ևս կիրառվել է *խաշարի* համակարգը, ավելին, ըստ պատմիչի, խաշարում ընդգրկվածները բաժանվում էին տասնյակների ու հարյուրակների, որոնց հրամանատար նշանակվում էին մոնղոլներ[973]: Ան-Նասավին, խոսելով Ջեբեյի ու Սուբեդեյի կողմից Խորասանի քաղաքների, մասնավորապես՝ Նեսայի գրավման մասին (1220թ.), նշում է քաղաքի հարակից գյուղերից մարդկանց օգտագործումը Նեսայի պաշարման ու քաղաքների պարիսպների ավերման համար[974]: Հավանաբար, *խաշարի* կիրառման մասին է խոսում նաև Պլանո Կարպինին՝ նշելով. «*Թշնամու դեմ նրանք ուղարկում են այլ*

---

[965] Նույն տեղում, էջ 269:

[966] **Օրբելեան Ս.**, Պատմութիւն նահանգին Սիսական, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Շահնազարեանց. Հ. Բ., Փարիզ, 1859, էջ 150:

[967] Նույն տեղում:

[968] Վրաց ժամանակագրություն, աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 75:

[969] *Խաշար կամ խաշարե (պրսկ.՝* خاشاره *«համատեղ աշխատանք»*): Սկզբնական շրջանում այս տերմինով բնութագրվում էր խոշոր շինությունների, ինչպիսիք են ոռոգման ջրանցքներ, պաշտպանական կառույցներ, որսատեղիներ կառուցման ծառայությունը (**Абу-л-Фазл Бейхаки**., Ташкент, 1962, сс. 191, 364, 509, 611, 653, 661, 704, 914) : Մոնղոլական շրջանում խաշար եզրի տակ պատմիչները նշում էին գերյալներին, որոնք օգտագործվում էին քաղաքների պաշարման ժամանակ՝ որպես կենդանի վահան: Խաշարի կիրառման դեպքեր են արձանագրված նաև Հյուսիսային Չինաստանի նվաճվան ժամանակ, մասնավորապես չինացի տարեգիր Մենխունի աշխատանքում (**Васильев В.**, История и древности восточной части Средней Азии, ТВОРАО, т. IV, 1857, с. 224, приложение III, **Тимохин Д.**, Использование монгольскими войсками тактики хашара в период завоевания государства Хорезмшахов (1219 – 1221гг.) // «Батыр» № 1. 2011 (№2). С. 33 – *39):*

[970] **Juvaini,** *p. 124.*

[971] **Bar Hebraeus' Chronography,** *translated from the Syriac by Budge E., vol. 1, Oxford University Press, 1932, p. 381-383*.

[972] **Рашид ад-Дин**, Сборник летописей, т. 1, кн. 2, М-Л, 1952, с. 227-*228.*

[973] **Рашид ад-Дин,** Т. 1, Кн. 2, с. *201.*

[974] **Шихаб ад-Дин ан-Насави**, Сират ас-султан Джалал ад-Дин Манкбурны. М. Восточная литература. 1996 с. 92.

ժողովուրդներից գերիների ջոկատներ, որոնք գտնվում են թշնամու և մոնղոլների միջև»[975]: Լևոն Բաբայանը, անդրադառնալով Անիի գրավմանը (1236թ.), նշում է Ավագի և հայ ու վրաց մյուս իշխանների ռազմական ուժերի ներառումը մոնղոլական բանակների մեջ՝ որպես *խաշար*: Անդրադառնալով Կիրակոս Գանձակեցու այն վկայությանը, թե «*Եւ առեալ կնա մեծամեծ իշխանացն, որք էին հնապանդ թաթարին, Աւագին, որ կօրավարն էր*»[976], Լևոն Բաբայանն այն եզրակացությանն է հանգում, որ «*Ավագը մոնղոլական բանակում ծառայության մտած հայ-վրացական ավատատիրական աշխարհակորի գլխավոր հրամանատար էր նշանակված*»:[977] Սակայն պետք է նկատել, որ մոնղոլների նվաճողական ռազմավարության համատեքստում *խաշարի* ու *չերիկի* զորամիավորումները տարբերվում էին իրենց բնույթով՝ առաջին հերթին հավաքագրման ու կիրառման տեսանկյունից: Կիրակոս Գանձակեցին Մուֆարդին քաղաքի գրավման մասին նշում է հետևյալը. «*Այլ և բազմաց այլոց գաւառաց եհաս վտանգ, զի աշխարհ, որ հնապանդեալ էին թաթարին, նեղեցան ի հարկապահանջութեանց և ի բեռնակրութեանց, որք տանէին զկերակուր և զըմպելի պաշարողաց քաղաքին: Եւ յոլովք մեռանէին ի սաստիկ ցրտոյ ձեանն, որ ունէր զլերինսդեղանակս ձմեռայինս*»[978]: Դժվար չէ նկատել *խաշարի* կիրառման դեպքը պատմիչի հաղորդած տեղեկության մեջ: 1248թ. գրված հայերեն ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «*...Երիտասարդքն մեր՝ հովիւք և կատպանք (ջոկարածք) այլասեռից*»[979]: Թերևս այդ առիթով գրիչը դառնությամբ է նշում 1236թ. արշավանքի կապակցությամբ «*և զեղբայր եղբաւրն սպանանել տային*»:[980] Չերիկի կիրառման ժամանակ ոչ մոնղոլներից բաղկացած այդ զորամիավորումները, ռազմական հստակ կանոնակարգին հետևելուց զատ, ինչպես ներկայացված է «*Մոնղոլների գաղտնի պատմության*» էջերում[981], ստանում էին որոշակի առավելություններ և անգամ ավարից ու կողոպուտից՝ որոշակի մասնաբաժին: Փոքր Ասիա արշավելու ժամանակ (1242թ.) Բաչու նոյինը, աղբյուրի համաձայն, «*տարավ Վրաստանի մեծամեծ իշխաններին*[982]»: Այսպես, ըստ վրաց անանուն ժամանակագրի՝ Չմանկատուկի կամ Քյոսե-Դաղի ճակատամարտից (1243թ.) հետո «*վրացիք և թաթարները ամենայն հարստությամբ ուռճացան՝ ոսկով ու արծաթով, ոսկե և արծաթե գավաթներով և սկուտեղներով, արտասովոր կտորեղենով ու հանդերձանքվ: Այնքան ձի, ջորի ուղտ վերցրին, որ թիվ չուներ*»[983]: Հայկական աղբյուրները, մասնավորապես Կիրակոս Գանձակեցին[984] և Գրիգոր Ակներցին[985] խոսում են հայ ու վրաց իշխանների

---

[975] Հարկ է նշել, որ նույն աղբյուրի համաձայն, դեռևս Չինգիզ-խանի կառավարման շրջանում, նվաճված ժողովուրդներից համալրվում էին նաև մոնղոլական բանակները, որը հստակորեն տարբերվում է հիշատակված գերիների ջոկատներից (Путешествие в восточные страны Плано Карпини и Рубрука, М., 1957, с. 53, 56):

[976] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 257:

[977] **Բաբայան Լևոն,** Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 205:

[978] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 386:

[979] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Մաթևոսյան Ա. Ա., Եր., 1984, էջ 247: (այսուհետ՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար):

[980] Նույն տեղում, էջ 136:

[981] *The Secret History of the Mongols, translated by Urgunge Onon, Rouyledge, 2001, pp. 140, 170, 223.*

[982] Վրաց ժամանակագրություն, էջ 77: Գրիգոր Ակներցին այդ առիթով ևս նշում է մոնղոլական զորքի հետ «*հանդերձ Հայոց եւ Վրաց իշխանաւքն, եւ եկին ի վերայ աշխարհին Հոռոմց անթիւ բազմութեամբ*» (**Գրիգոր Ակներցի**, աշխատասիրությամբ Ն. Պողարեանի, Երուսաղեմ, 1974, էջ 29):

[983] Վրաց ժամանակագրություն, էջ 77:

[984] Պատմիչը նշում է, որ Էրզրումի գրավումից հետո «*անթիւ զոյին անդ կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն՝ ծախէին քրիստոնէիցն, որ*

և նրանց զինվորների կողմից բազում գերիների փրկագնման, մշակութային մեծ արժեքներ (ավետարաններ, ձեռագրեր և այլն) վերադարձնելու մասին: Ինքնին պարզ է, որ հայ ու վրաց իշխանները, ներգրավված լինելով նվաճումներում, ինչ-որ չափով մասնակից էին ավարի բաժանման գործընթացին: Ուստի պատահական չէ վրաց անանուն պատմիչի վերը նշված տեղեկությունը: Մյուս կողմից, *խաշարի* կիրառման ժամանակ, ինչպես պատմիչներն են բնութագրում, կենդանի վահանի օգնությամբ, որպես «թնդանոթի միս», ծառայող աշխարհազորայիններն էին օգտագործվում հիմնականում քաղաքների պաշարման ու պարիսպների ավերման համար: Դիպուկ է բնութագրել XIII դարի ժամանակագիր Մատթեոս Փարիզեցին մոնղոլների կողմից գործի դրվող այդ քաղաքականությունը: Ժամանակագրի խոսքերով՝ ստրուկի աստիճանի իջեցված քաղաքի բնակիչներին ու գյուղացիներին ստիպում էին կռվել իրենց իսկ ազգակիցների դեմ և ամենաանշան սխալի դեպքում դատապարտում էին մահվան, իսկ հաղթության դեպքում ոչ մի բանի չէին արժանացնում, քանզի ողջ մնալն արդեն իսկ մեծ նվեր էր նրանց համար[986]:

3.«Չերիկ» կորամիավորումների դերը մոնղոլական կորքերի հաղթանակի գործում: Չերիկում ընդգրկված տեղական իշխողների զորքը բաց ճակատամարտերում ուներ ռազմական համապատասխան դասավորվածություն՝ մոնղոլական սովորույթին համապատասխան: Չերիկի մեջ ներառված տեղական իշխողների ռազմական ուժերը պարտավոր էին խստորեն հետևել ռազմական այն կարգապահությանը, որն առկա էր մոնղոլական բանակում: Այդ առիթով 1244թ. հիշատակարաններից մեկում հանդիպում ենք հետևյալին. *«Նուաճեալ ի ծառայութեան ընթանց կիշխանս, եւ կիեծելապաւրս ընդ ինքեանս տանէին ուր և երթային»*[987]: Գրիգոր Ակներցու վկայությամբ՝ հայ ու վրաց իշխանները, կանոնավոր հարկ վճարելուց զատ, «*ըստ ուժոյ եւ ըստ կարողութեան իւրեանց հեծելովք գնային ընդ նոսայ ի խալան*

ի զօրուն էին, պաճախագինն ընդ դոյզն գնոց»: Աղբյուրի համաձայն հայ և վրաց իշխանները «*այլ և ի գերելոց անտի զբազումս* ***գնեցին՝*** *զարս և զկանայս և զմանկտի. զեպիսկոպոսս և զքահանայս և զսարկաւագունս՝ որքան հնար էր, գնեցին իշպանքն քրիստոնեայք Աւագն և Շահնշահն, և Աղբուղայն, որդին Վահրամայ, և Գրիգոր Խաչենեցի՝ Դօփին որդի*»: Մեկ այլ տեղում, արդեն Տևրիկ քաղաքի գրավումից հետո, պատմիչը նշում է մոնղոլական բանակի կազմում ընդգրկված հայ ու վրաց իշխանները՝ Ավագը, Շահնշահը, Վահրամը և նրա որդին՝ Աղբուղան, Հասան Ջալալը և ուրիշները («*քրիստոնեայքն, որք էին ընդ նոսա* ***զինուորեալք***») «*զբազումս* ***ազատեցին*** *ի գերելոցն, որ յայտնի և որ ի ծածուկ, զքահանայս և զկրօնավորս*» (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 279-280): Ի դեպ, Ա.Շահնազարյանը, հիմնվելով Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկությունների վրա, նշում է, որ Հասան Ջալալը չի մասնակցել մոնղոլների 1242թ. կազմակերպած արշավանքին՝ ընդգծելով Կարինի գրավման ժամանակ վերջինիս անվան բացակայությունը: Սակայն Տևրիկի գրավումից հետո նույն աղբյուրն արդեն նշում է Հասան Ջալալի ներկայությունը «զօրք իւր»-ով, ուստի բացառված չէ վերջինիս մասնակցության հավանականությունը արշավանքի հենց սկզբից (**Շահնազարյան Ա.**, Հայաստանի հարավային և արևմտյան շրջանների նվաճումը մոնղոլների կողմից, Պատմաբանասիրական հանդես, N 3, 2004, էջ 171):

[985]Կարին քաղաքի գրավման կապակցությամբ պատմիչը հաղորդում է. «*Հայոց և Վրաց իշխանքն առեալ բազում գրեանս, Տաւնական եւ Մարտիրոդեք, Առաքեալ եւ Ընթերցուած, Գործք եւ ոսկէդիր Աւետարանք, անման փարթամութեամբ զարդարած...ուստի առեալ տարան յաշխարհն արեւելից, եւ լցուցին զվանորայսն, ամենայն զարդուք եկեղեցոյ*» (**Գրիգոր Ակներցի**, էջ 28):

[986] Ան-Նասավիի հաղորդմամբ՝ խաշարի այն ներկայացուցիչները, ովքեր տապալում էին հրամանը և քաղաքի գրավումը ձախողվում էր, մոնղոլները կազմակերպում էին գլխատման սոսկալի տեսարաններ (Шихаб ад-Дин Мухаммад ибн Ахмад ан-Насави, Сират ас-султан Джалал ад-Дин Манкбурны, М., 1996, с. 91, **Матузова В. И.,** Английские средневековые источники, Матфей Парижский, “Великая Хроника”, М., 1979, с. 137):

[987] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 228:

(արշավանք), եւ սռնուին կոչ հնականդեալ քաղաքս»[988]:Նույն Քյոսե-Դաղի ճակատամարտի առնչությամբ վրաց անանուն պատմիչը նշում է հետևյալը. *«Թաթարները նույնպես մարտական կարգով դասավորվեցին, իսկ իրենց ամենաընտրյալներին կարգեցին ձախ կողմում: Այսպես սովորություն ունեին լավագույններին առհասարակ ձախ թևում դասավորել, այն պատճառով, որ մնացած բոլոր ազգերն իրենց քաջերին ու ընտրյալներին կարգում էին աջ կողմում, որպեսզի ամենաընտրյալները ամենաընտրյալներին հանդիպեն»*[989]: Քյոսե-Դաղի ճակատամարտի նախօրեին հայ-վրացական ուժերի դասավարվածության մասին վկայում է նաև Գրիգոր Ակներցին: Պատմիչի խոսքերով հայ-վրացական ուժերը՝ *«ապատագունդ կաւրաւք Հայոց եւ Վրաց»*, աչքի ընկան սուլթանական բանակի աջ թևի ջախջախման ժամանակ[990]: Կիրակոս Գանձակեցին Քյոսե-Դաղի ճակատամարտի առնչությամբ նշում է մոնղոլական զորքերի հրամանատար Բաչու նոյոնի կողմից *«կեկամուտ»* զորքերի ռազմական կարգով դասավորելու մասին: Նպատակն այն էր, որ *«կեկամուտ»* զորքերը չդավաճանեն և չանցնեն թշնամու կողմը: Նույն աղբյուրի համաձայն՝ Բաչու նոյինը ընտրեց *«յամենեցունց կարիսն և կքաջս յառաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք հանդիպեցան կօրաց սուլտանին և մարտուցեալք՝ ի փախուստ դարձուցին զնոսա»*[991]: Այստեղ խոսքը գնում է ոչ թե խաշարի կիրառման, այլ *«կեկամուտ»*, այսինքն՝ օժանդակ ուժերի մասին, որոնք ներգրավված էին չերիկի մեջ և ճակատամարտում ունեին իրենց համապատասխան տեղն ու դերը: Չերիկի նման զորամիավորումները զուտ մոնղոլական երևույթ չէին: Նմանատիպ ստորաբաժանումների կիրառումը հատուկ էր քոչվորական հասարակություններին[992]: Աղբյուրները «օժանդակ» ուժերի մասին վկայում են նաև սելջուկյան բանակում: Սելջուկների կողմից հանդես էին գալիս սիրիացիները, հույները, ֆրանկ ասպետները և թուրքմենական ցեղերը: Հետաքրքրական է նույն ճակատամարտում սելջուկների կողմից հանդես եկած վրացական ուժերի ներկայությունը: Իբն Բիբին հիշատակում է *pisar-i Gurji*-ն՝ (թրգմ.՝ «Վրացի տղա», «Վրաց որդի»), որ կրում էր նաև Զահիր ադ-Դին պատվանունը[993]: Վերջինս հիշատակվում է դեռևս 1239-1240թթ. Փոքր Ասիայիում սելջուկյան սուլթան Ղիյաս ադ-Դին Քեյ Խոսրով II-ի դեմ Բաբա Իսհակի բարձրացրած ապստամբության ճնշման ժամանակ[994]: Հիշատակվում են մյուս ներկայացուցիչները՝ Ախալցիխելի-թորելի Շալվայի որդին՝ Փարադավլան և Շարվաշիսձե Դարդինը[995]: Քյոսե Դաղի ճակատամարտի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է պահպանել պատմիչ Բեյբարս ալ-Մանսուրին: Պատմիչի խոսքերով՝ ճակատամարտի նախօրեին սելջուկյան բանակներից մեկի հրամանատարությունը հանձնվել էր Գուրջի Խաթունի եղբորը, որ հավատով քրիստոնյա էր[996]: Հասկանալի է, որ Գուրջի Խաթունը ոչ այլ ոք էր, քան վրաց թագուհի Ռուսուդանի (1223-1245թթ.) դուստրը՝ Թամարը, որը կնության էր տրվել Ղիյաս ադ-Դին Քեյ Խոսրով II-ին: Դժվար է ստույգ ասել, թե ով է պատմիչի հիշատակած Գուրջի Խաթունի եղբայրը, որին վստահվել էր սելջուկյան բանակներից մեկի հրամանատարությունը, և որի մասին աղբյուրը նշում է մեծ դրվատանքով: Վրաց արքայական ընտանիքից սելջուկյան արքունիքում բացի Թամարից աղբյուրներում հիշատակվում է միայն Գեորգի Լաշայի (1213-1223թթ.) որդին՝ Դավիթը՝ ապագա

988 **Գրիգոր Ակներցի**, էջ 26:
989 Վրաց ժամանակագրություն, էջ 78:
990 **Ակներցի Գ.**, էջ 29:
991 **Գանձակեցի Կ.**, էջ 282:
992 **Крадин Н., Скрынникова Т**., Империя Чингиз-хана, М., 2006, с. 419-423.
993 **Duda H.**, *Die Seldschukengeschichte des Ibn Bibi, Copenhagen, 1959, s. 219.*
994 Նույն տեղում:
995 Վրաց ժամանակագրություն, էջ 77:
996 **Peacock A.**, *Georgia and the Anatolian Turks in the 2th and 13th Centuries, Anatolian Studies, Vol. 56, British Institute at Ankara, 2006, p. 142.*

Դավիթ Ուլուն (1247-1270 թթ.): Ա. Փիքոքի դիտարկմամբ՝ Դավիթն ամենայն հավանականությամբ ծնվել է 1212-1223թթ. միջակայքում, ուստի որոշակի համոզվածությամբ կարելի է ասել, որ Իբն Բիբիի հիշատակած փեսար-ի Գուրջին և Բեյբարս ալ-Մանսուրիի գրչով հիշատակվող Գուրջի Խաթունի եղբայրը նույն անձինք են[997]: Ընդհանուր առմամբ, մոնղոլները Հայաստանում ու Վրաստանում ամրոցներին ու բերդերին տիրացան՝ ներգրավված չլինելով բաց ճակատամարտերում: Ոչնչացումներից ու մասսայական կոտորածներից բացի անհրաժեշտ է փաստել մի կարևոր հանգամանք ևս. հայ ու վրաց իշխանների՝ ակտիվ պայքարից հրաժարվելը և, առանձին դեպքերում, մոնղոլների հետ բանակցությունների մեջ մտնելը, տալիս էին ցանկալի պտուղներ: «*Անմիջական հնապանդություն-հողերի վերադարձ-ռազմական օժանդակություն*» եռանկյունին կիրառելի երևույթ էր մոնղոլական նվաճումների ժամանակ, ինչն ակնհայտ երևում է Օրբելյանների, Զաքարյանների, Հասան-Ջալալյանների և այլոց դեպքերում: Հայ ու վրաց իշխանների կողմից մոնղոլների հետ առանձին և ուղղակի կապերի հաստատումը մոնղոլների համար կանխորոշեցին դյուրահաս հաղթանակներ՝ «*բաժանիր, որ տիրես*» հայտնի կարգախոսի կիրառմամբ: Մեկ այլ կողմից ստեղծվում է հետաքրքիր պատկեր, երբ գրավված հողերը պաշտոնապես Մոնղոլական կայսրության սահմաններում են, բայց փաստացի կառավարվում են տեղի իշխանների կողմից: Պատահական չէ, որ արաբական աղբյուրները հայ ու վրաց իշխաններին հաճախ կոչում են «սուլթան», «մելիք» կամ «հաքիմ»[998]:

ON THE ISSUE OF THE PRESENCE OF ARMENIAN-GEORGIAN MILITARY FORCES IN THE MONGOLIAN UNITS CHERIG IN THE 1230-1240s

ARAM POGHOSYAN
Yerevan State University, Faculty of History,
PhD student of Department of Caucasiology,
Yerevan, Republic of Armenia

The article describes the peculiarities of the Armenian-Georgian military involvement in the military units called «cherig». In general, the study of the process of recruiting military assistant forces from sedentary peoples has long been of great interest to researchers, as the conclusions of the Soviet times need reassessment in modern days. First of all, the study of the process allows clarifying not only the peculiarities of nomadic military history, but also the direction of political processes and the transformation of political traditions. According to the author, the aforementioned realities have gained logical development in the Caucasian region, where the Mongols, as well as in China and Iran, were in political dialogue with representatives of the local governers. The information provided by both Armenian and Georgian, Persian and Arabic sources is subject to source analysis, revealing the discovery of political dialogue between the Armenian and Georgian leaders and the Mongolian military commanders during the Mongol intelligence and major invasions. The article concludes that the "Cherig" and its commanders have played their unique role in the victories of the Mongols.

Key words: *Cherig, Hashar, Political Dialogue, Noyon, Kyoshe-Dagh Battle, «Auxiliary» troops, David Ulu, Armenian-Georgian Forces.*

---

[997] Նույն տեղում:

[998] **Тизенгаузен, В. Г**., Сборник материалов, онтосяшихся к истории Золотой Орды, т. *II*, СПБ, 1941 , с. 84.

О ВОПРОСЕ ПРИСУТСВИЯ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ВОЕННЫХ СИЛ В МОНГОЛЬСКИХ ВОИНСКИХ СОЕДИНЕНИЯХ «ЧЕРИК» В 1230-1240-Х ГОДАХ

АРАМ ПОГОСЯН
аспирант отдела кавказоведения факультета истории Ереванского государственного университета, г.Ереван, Республика Армения

В статье рассматриваются особенности армяно-грузинского военного участия в воинских частях под названием «черик». В целом, изучение процесса набора военнослужащих из оседлых народов уже давно вызывает интерес у исследователей, так как выводы советских времен в наши дни подвергаются переоценке. Прежде всего, изучение процесса позволяет выяснить не только особенности военной истории кочевников, но и направление политических процессов и трансформацию политических традиций. Согласно автору, вышеупомянутые реалии получили логическое развитие в кавказском регионе, где монголы, как в Китае и Иране, вели политический диалог с местными феодалами. Информация, предоставленная как армянскими, так и грузинскими, персидскими и арабскими источниками, является предметом анализа, выявляя политический диалог между армянскими и грузинскими лидерами и монгольскими военными командирами во время проведения монголами разведки и вторжения. В статье делается вывод о том, что «черик» и его командиры сыграли уникальную роль в победах монголов.

Ключевые слова: *черик, хашар, политический диалог, нойон, битва при Кесе-даге, «вспомогательные» войска, Давид Улу, армяно-грузинские силы.*